ՔԱՂԱՔԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄՆ ԱՐԴԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ. ՍՈՑԻՈԼՈԳԻԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

URBAN MOVEMENT IN CONTEMPORARY ARMENIAN SOCIETY: A SOCIOLOGICAL ANALYSIS

ГОРОДСКОЕ ДВИЖЕНИЕ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ОБЩЕСТВЕ: СОЦИОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ

Գայանե Հարությունյան
Gayane Harutyunyan
Гаяне Арутюнян

«Պրիզմա» հետազոտական կազմակերպություն
«PRISMA» Research and Analysis
Исследовательская компания «Призма»

info@armsociology.com

Ներկայացվել է՝ 06.05.2024; գրախոսվել է՝ 07.08.2025; ընդունվել է՝ 12.08.2025
Received: 06.05.2024; Revised: 07.08.2025; Accepted: 12.08.2025
Представлено: 06.05.2024; рецензировано: 7.08.2025; принято: 12.08.2025

© Հեղինակ, 2025: Տարածվում է Creative Commons Attribution 4.0 Licence-ի պայմաններով
© The Author, 2025. Distributed under the terms of Creative Commons Attribution 4.0 Licence
© Автор, 2025. Распространяется на условиях Creative Commons Attribution 4.0 Licence

DOI: 10.53548/0320-8117-2025.2-161

Ամփոփում – Սույն հոդվածը նվիրված է քաղաքային սոցիալական շարժման ուսումնասիրությանն արդի հայաստանյան հասարակությունում, մասնավորապես՝ «Պահպանե՛նք Աֆրիկյանների ակումբի շենքը» շարժման ուսումնասիրությանը: Քննարկվում են դասական քաղաքային շարժումների էությունը և առանձնահատկությունները: Վերլուծության են ենթարկվել արդի հայաստանյան հասարակության համատեքստում քաղաքային շարժման կյանքի փուլերը՝ կենտրոնանալով առաջացման այնպիսի սոցիալական պատճառների վրա, ինչպիսիք են քաղաքային միջավայրի միջամտությունները, ազգային ինքնության ուժեղացումը և քաղաքացիական գիտակցության զարթոնքը: Ներկայացվում են նաև այս քաղաքային շարժման կառուցվածքը և հիմնական գործառույթները՝ տեղեկատվական-իրազեկման, կոլեկտիվ հիշողության, ինքնության վերարտադրություն և այլն: Հոդվածը դիտարկում է նաև շարժման անհաջողության պատճառները՝ զարգացնելով քաղաքային սոցիալական շարժումները մեկնաբանող տեսական մոտեցումները: Այն հիմնվում է սոցիոլոգիական ուսումնասիրության արդյունքների վրա: Որպես մեթոդաբանություն՝ ընտրվել է դեպքի հետազոտման մեթոդաբանությունը, դրա շրջանակում կիրառվել են խորին հարցազրույցների և փաստաթղթերի վերլուծության մեթոդները՝ որպես տեղեկատվության հավաքման մեթոդ: Հետազոտությունն իրականացվել է այս քաղաքային շարժմանը մասնակցություն ունեցած անձանց շրջանում: Հոդվածը գիտական արժեք է ներկայացնում, քանի որ ոչ միայն արձանագրում է քաղաքային ամենա-

երկարատև պատմություն ունեցող շարժումներից մեկի առաջացման ընթացքն ու զարգացումը, այլ նաև բացահայտում է այն խոչընդոտները, որոնք նպաստեցին շարժման անկմանը: Դրանց թվում դեր ունեցան ինչպես ներքին գործոնները, որոնք առնչվում են շարժման առանձնահատկություններին, այնպես էլ արտաքին գործոնները, որոնք անմիջական կապ չունեին շարժման անդամների և նրանց ռազմավարության հետ. դրանք բխում էին ժամանակակից հայ հասարակության սոցիալ-քաղաքական, մշակութային և տնտեսական միջավայրից:

Abstract – This article explores an urban social movement in contemporary Armenian society, focusing on the "Save the African Club Building" movement. It discusses the general characteristics of urban movements and analyzes the development of this particular case in the context of Armenia's modern society. Key social factors behind the movement's emergence are examined, including construction-driven disruption of the urban environment, the reinforcement of national identity, and the awakening of civic consciousness. The article also outlines the movement's internal structure and key functions – such as public awareness, collective memory preservation, and identity reproduction. The research is based on a sociological case study approach, utilizing in-depth interviews and document analysis to gather data from participants involved in the movement. The article holds scientific significance by not only documenting the formation and trajectory of one of Armenia's longest-standing urban movements but also identifying the main reasons behind its eventual decline. Among these were both internal factors related to the specific characteristics of the movement itself, and external factors that were not directly connected to the movement's members or their strategies, but rather stemmed from the broader socio-political, cultural, and economic environment of contemporary Armenian society.

Аннотация – Статья посвящена исследованию городского социального движения в современном армянском обществе на примере движения «Сохраним здание Клуба Африкянов». В работе рассматриваются особенности городских движений и анализируется развитие конкретного кейса в контексте актуальных общественно-политических реалий современного армянского общества. Особое внимание уделяется социальным причинам возникновения движения, таким как разрушительное воздействие строительства на городскую среду, стремление к укреплению национальной идентичности и пробуждение гражданского самосознания. В статье анализируются также структура движения и его ключевые функции – информирование общественности, сохранение коллективной памяти и воспроизводство культурной идентичности. Исследование базируется на социологическом подходе с использованием методологии кейс-стади. Информация была получена с использованием методов глубинных интервью и документального анализа, проведённых среди участников движения. Научная значимость статьи заключается не только в описании формирования и развития одного из самых длительных городских движений в современном армянском обществе, но и в выявлении причин его угасания. Среди них были как внутренние факторы, связанные со спецификой самого движения, так и внешние обстоятельства, которые не имели прямой связи с участниками движения или их стратегиями, а вытекали из социально-политической, культурной и экономической среды современного армянского общества.

Հիմնաբառեր – սոցիալական շարժում, բողոք, կոնֆլիկտ, ակտիվիզմ, ինքնություն:

Keywords – social movement, protest, conflict, activism, identity.
Ключевые слова – социальное движение, протест, конфликт, активизм, идентичность.

Ներածություն

Քաղաքային միջավայրում աշխարհով մեկ տարածվող տարատեսակ ճգնաժամերի տարածվածությունը պարարտ հող է ստեղծում քաղաքային շարժումների ձևավորման համար: Հետազոտողների հետաքրքրությունը քաղաքային ակտիվիզմի, մասնավորապես քաղաքացիական հասարակության և սոցիալական շարժումների հանդեպ աճում է՝ պայմանավորված քաղաքացիական ակտիվության ալիքով, որն ուղղված է քաղաքային հիմնախնդիրների լուծմանը (Domaradzka 2018, 607):

Քաղաքային շարժումը սոցիալական շարժման տեսակ է: Այն սահմանվում է սոցիալական շարժումներին բնորոշ հատկանիշներով (Pickvance 2003, 102). ոչ ֆորմալ, սոցիալական ցանցի միջոցով իրականացվող անհատների և խմբերի հավաքական գործողության տեսակ է՝ ներգրավված սոցիալական կոնֆլիկտի մեջ և նպատակ ունի փոխել գործող սոցիետալ կարգը (Հարությունյան 2021, 74): Այս առումով քաղաքային շարժումները քաղաքային միջավայրում փոփոխությունների կանխման կամ խթանման հավաքական ջանքեր են: Այլ կերպ ասած՝ դրանք քաղաքային փոփոխությունների հիմնական պատճառն են և ուղենիշը (Olcar 2023, 1): Այս շարժումները ձևավորվում են մի կողմից որպես արձագանք կապիտալիստական հարաբերություններին, որոնք սպառում են հանրային տարածքները, և մյուս կողմից՝ պետական կառույցների անգործությանը, որոնք պետք է կարգավորեն քաղաքի բնակիչների ամենօրյա կյանքը (Finquelievich 1981, 239):

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել քաղաքային շարժման առանձնահատկությունները արդի հայ հասարակությունում: Թեմայի տեսական արդիականությունը կարելի է տեսնել սոցիալական շարժումների վերաբերյալ տեսական գիտելիքների համալրման մեջ՝ հայ ժամանակակից հասարակության օրինակով: Հատկապես, որ քաղաքային շարժումներն անցումային հասարակություններում, ինչպիսին է նաև հայ ժամանակակից հասարակությունը, ցուցաբերում են զարգացման այլ միտումներ (Mayer, Boudreau 2012, 285): Իսկ պրակտիկայում նման գիտելիքները հնարավորություն կտան հասկանալու, թե ինչ քաղաքային խնդիրների շուրջ է զարգանում շարժումը, ինչ գործառույթներ է կատարում և ինչ խոչընդոտների է բախվում:

Քաղաքային շարժումը ժամանակակից հայ հասարակությունում

Հայաստանում քաղաքային շարժումների առաջացումը պայմանավորված է մի շարք գործոններով, այդ թվում՝ քաղաքային միջավայրում ակտիվ շինարարական միջամտություններով, որոնք վերափոխում են քաղաքը ոչ միայն որպես ֆիզիկական, այլ նաև իբրև սոցիալական տարածք: Շինարարական միջամտություններով պայմանավորված՝ տեղի է ունենում հանրության համար էական

նշանակություն ունեցող հանրային տարածքների մասնավորեցում: Բացի այդ, շինարարական նախագծերն իրականացվում են առանց հանրային մասնակցության կամ բավարար թափանցիկության՝ առաջնորդվելով գերակա տնտեսական շահերով և ոչ թե մշակութային արժեքներով: Քաղաքի հանդեպ սեփականության ձևի՝ մասնավոր-հանրային, փոփոխությունն ընկալվում է որպես հանրային կյանքի սահմանափակում և նպաստում հանրային բողոքի ալիքի առաջացմանը: Հենց այդ պատճառով քաղաքային շարժումները հաճախ պաշտպանում են ոչ միայն քաղաքի ֆիզիկական օբյեկտները, այլ նաև հանրության իրավունքը՝ տնօրինելու սեփական քաղաքը: Քաղաքային շարժումների աճի մեկ այլ նախադրյալ ազգային ինքնության ուժեղացումն է. Քաղաքային կենտրոնական տարածքներում հաճախ կենտրոնացած են մշակութային, ճարտարապետական, և պատմական կոթողներ՝ եկեղեցիներ, հին շենքեր, շուկաներ և հրապարակներ: Այս վայրերը առավել գրավիչ են շինարարական միջամտությունների տեսանկյունից, քանի որ կարող են մեծ եկամտի աղբյուր հանդիսանալ: Ուստի այս տարածքների ֆիզիկական և սոցիալական ոչնչացումը կամ աղճատումը հանրության կողմից ընկալվում է որպես ազգային հիշողության և ինքնության խեղում: Այս առումով քաղաքային շարժման հիմնական նպատակն ու գործառույթը լոկալ ինքնության պաշտպանությունն է (Hammel, Lustiger-Thaler, Mayer 2005, 23): Երրորդ նախադրյալը քաղաքացիական գիտակցության զարթոնքն է. հասարակությունը սկսում է տեսնել իրեն ոչ միայն որպես իրավունքներ ունեցող, այլ նաև այդ իրավունքները պաշտպանող ակտիվ դերակատար: Քաղաքային բացասական փոփոխություններն ընկալվում են ոչ միայն ֆիզիկական տարածքի փոփոխություն, այլ քաղաքացու ձայնի, իրավունքների և ինքնության խաթարման փորձ:

Որոշ հետազոտողներ նշում են նաև այլ հանգամանքներ, որոնք դեր են խաղացել քաղաքացիական նախաձեռնությունների կայացման գործում: Դրանց թվում է Հայաստանում առաջին հետխորհրդային սերնդի չափահասության տարիքին հասնելը, սոցիալական մեդիայի տարածվածությունը և առհասարակ ամբողջ աշխարհում բողոքի շարժումների տարածվածությունը (Իշխանյան 2015, 33–34): Բողոքական վարքի դրսևորմանը նպաստում են նաև սոցիալ-տնտեսական վիճակով պայմանավորված ընդհանուր անբավարարվածության զգացման գերակայությունը և ապագայի հանդեպ անորոշությունը (Погосян 2017, 44):

Ժամանակակից հայ հասարակությունում ձևավորված քաղաքային շարժումների բազմաթիվ դեպքեր են եղել, որոնց մեծամասնությունը պսակվել է անհաջողությամբ, քանի որ չեն կարողացել իրականացնել իրենց նպատակը (տե՛ս աղյուսակ 1): Քաղաքային շարժումները կենտրոնացված են Երևանում. մայրաքաղաքում շինարարական միջամտությունները առավել տարածված են: Բացի այդ, այստեղ բնակչության քանակի մեծությունը և տարբեր անհամասեռ խմբերի առկայությունը դժգոհությունների առաջացման առավել մեծ ռիսկեր են պարունակում, քան այլ քաղաքներում:

Աղյուսակ 1. Քաղաքային շարժման դրսևորման դեպքեր ժամանակակից հայ հասարակությունում վերջին քսանամյակում

Դեպք	Սկզբնաժամկետ	Հանգուցալուծում
Ո՛չ Վիշապների պուրակի կառուցապատմանը	Նոյեմբեր 2010	Դրական
Փրկե՛նք ուսանողական այգին	Օգոստոս 2010	Բացասական
Պահպանե՛նք կինո Մոսկվայի ամառային դահլիճը	Մարտ 2010	Դրական
Պահպանե՛նք Աֆրիկյանների ակումբի շենքը	Հուլիս 2011	Բացասական
Դեմ ենք ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի տան ոչնչացմանը	Հոկտեմբեր 2011	Բացասական
Արամի 30	Նոյեմբեր 2011	Բացասական
Փրկե՛նք Մաշտոցի պուրակը	Փետրվար 2012	Դրական
Փակ շուկան չի՛ քանդվելու	Մայիս 2012	Բացասական
ԱՕԿՍ-ը մերն է	Փետրվար 2017	Դրական
Փրկե՛նք Ֆիրդուսը	Հունիս 2020	Բացասական

Ուստի քաղաքային խնդիրների շուրջ կոնֆլիկտներն ավելի մեծ հնարավորություն ունեն դրսևորվելու հենց Երևանում: Ինչպես նաև մայրաքաղաքում ավելի շատ են ռեսուրսները, որոնց շնորհիվ հնարավոր է ձևավորել սոցիալական շարժում և պահպանել դրա գոյությունը: Այսպես, բնակչության խտությունը նպաստում է քաղաքացիական ակտիվության ձևավորմանը և դրսևորմանը (Karolak 2019, 25): Միևնույն ժամանակ, փոքր քաղաքներում հարաբերություններն ավելի անձնավորված են, և մարդիկ ավելի փոխկապված են միմյանց, քան մայրաքաղաքում: Փոքր քաղաքներում խնամի-ծանոթ-բարեկամ կապերն ավելի նշանակալի ազդեցություն են ունենում խնդիրների կարգավորման հարցում: Ուստի փոքր քաղաքներում սոցիալական խնդիրների լուծման այլ մեխանիզմներ են գործում:

Մեթոդաբանություն

Պահպանե՛նք Աֆրիկյանների ակումբի շենքը» շարժումն ընտրվել է որպես հետազոտական օբյեկտ մի շարք պատճառներով, որոնցից առավել կարևոր են շարժման մասշտաբայնությունը և վերջինիս «կյանքի» տևողությունը: Համեմատած այլ քաղաքային շարժումների, որոնք զարգացան Հայաստանում, այս շարժումը գոյատևեց մի քանի տարի՝ փորձելով հասնել իր նպատակին, ինչի արդյունքում դրսևորվեցին դասական շարժումներին բնորոշ հատկանիշներ: Բացի այդ, շարժումը կարողացավ մեծ թվով համակիրներ գրավել թե՛ օնլայն հարթակներում, թե՛ իրական կյանքում՝ ստանալով մեծ հանրայնացում և որոշակի կշիռ ազդելու քաղաքային գործընթացների վրա, դառնալով էլ ավելի արդիական և հետաքրքիր որպես սոցիոլոգիական հետազոտման օբյեկտ:

Տեղեկատվության հավաքման հիմնական մեթոդ են հանդիսացել խորին հարցազրույցը և փաստաթղթերի վերլուծությունը: Խորին հարցազրույցներն իրականացվել են քաղաքային շարժմանը մասնակցած առանցքային տեղեկատուների հետ: Փաստաթղթերի վերլուծությունը կիրառվել է իբրև հավելյալ մեթոդ: Որպես փաստաթուղթ՝ դիտարկվել են իրավական ակտերը և օրենքները,

տարբեր կրիչների վրա ամրագրված փաստագրական նյութերը, ինչպես նաև սոցիալական շարժումների սոցիալական մեդիայում՝ պաշտոնական էջերում տարածվող նյութերը:

Հետազոտության շրջանակում կիրառվել է ինտենսիվ ընտրանքի տեսակը, որը ենթադրում է առավել ինֆորմատիվ դեպքերի ընտրություն: Ընդհանուր առմամբ, իրականացվել է 25 խորին հարցազրույց: Վերլուծվել են 3 իրավական փաստաթուղթ, 156 հրապարակում շարժման ֆեյսբուքյան պաշտոնական էջում: Ընտրանքի ծավալը պայմանավորվել է տեղեկատվության հագեցվածությամբ: Հետազոտությունն իրականացվել է 2020–2024 թվականների ընթացքում և կրում է ռետրոսպեկտիվ բնույթ:

Խորին հարցազրույցների մասնակիցների մեծամասնությունը եղել են կանայք (60%, 15 մասնակից), տղամարդիկ կազմել են 40% (10 մասնակից): Տարիքային շեմը կազմել է 18–45 տարեկան, բոլոր մասնակիցները ունեցել են բարձրագույն կրթություն: Մասնակիցներից հինգը ներկայացրել են տարբեր հասարակական կազմակերպություններ:

Հետազոտության հարցաշարը բաղկացած է եղել մի քանի մասից՝ ներածական, մոտիվացիա և ներառում, կոլլեկտիվ գործողություններ և մոբիլիզացիա, մարտահրավերներ և ապագայի տեսլական: Հարցաշարի յուրաքանչյուր բաժին նպատակ ուներ ուսումնասիրել շարժման որևէ կողմ:

«Պահպանե՛նք Աֆրիկյանների ակումբի շենքը» շարժման ընթացքը

Առաջացում. «Պահպանե՛նք Աֆրիկյանների ակումբի շենքը» շարժման ձևավորումը սկսվեց 2005 թվականին, երբ շենքի ճակատագրով անհանգստացած երկու քաղաքացի ահազանգեցին Աֆրիկյանների շենքի (շենքը կառուցվել էր XIX դարի վերջին՝ մեծահարուստ Աֆրիկյան եղբայրների կողմից, որոնք Քաղաքային դումայի անդամներ են եղել. նրանց շնորհիվ 1911 թվականին Երևանն առաջին անգամ ապահովվեց խմելու ջրով) վատթարացող վիճակի մասին: 2012 թվականին Աֆրիկյանների շենքն ընդգրկվեց տեղափոխման ենթակա շինությունների ցանկում, որը խթանեց քաղաքային շարժման բուն ծավալումը:

Ծավալում. Շարժման ակտիվ փուլը կարելի է պայմանականորեն համարել 2014 թվականի սկիզբը, երբ շենքի տեղափոխման ուղղությամբ բուն գործողություններ սկսվեցին: Շարժումը նախաձեռնած մասնակիցների խմբին սկսեցին միանալ այլ անհատներ: Շարժման կառուցվածքը բաղկացած էր միջուկից և նրանց աջակիցներից, ինչը տարածված երևույթ է Հայաստանում (Azatyan 2022, 112): Չնայած դրան՝ շարժումը չուներ ընդգծված առաջնորդ. այն կառավարում էր համակարգող խումբը: Վերջինս զբաղվում էր միջոցառումների պլանավորմամբ և իրականացմամբ:

Շարժման գոյության ակտիվ փուլում դրան միացան նաև այլ սոցիալական շարժումների մասնակցած երիտասարդներ, որոնց համար առաջնային խնդիրը ոչ թե պատմամշակութային արժեք ներկայացնող շենքի պաշտպանությունն էր,

այլ հասարակության գիտակցության փոփոխությունը: Այս միտումը նկատում են նաև այլ հետազոտողներ: Քաղաքացիական նախաձեռնությունների մասնակից քաղաքացիները իրենց ակտիվությունը նկարագրում են որպես «ինքնորոշված» քաղաքացիություն և մեծ կարևորություն են տալիս անկախությանը, համերաշխությանը և ինքնակազմակերպմանը (Իշխանյան 2018, 489):

«Մենք ենք տերը մեր երկրի: Ինձ համար ավելի կարևոր է, որ մարդիկ հասկանան՝ իրենք էլ կարող են այս երկրում բան փոխել, քան շենքի փրկությունը ցանկացած գնով»:
Խորին հարցազրույց, իգ., Երևան

Շարժման աջակիցները, որ նախկինում ևս մասնակցել էին այլ շարժումների, մեծ դեր խաղացին շարժման ծավալման գործում, քանի որ կուտակել էին անհրաժեշտ փորձ: Շարժման անդամների այս խումբը նախընտրում էր «փողոցային» պայքարի տեսակը՝ պայմանավորված ինստիտուցիոնալ մարմինների նկատմամբ վստահության պակասով և հավատով, որ հասարակությունը կկարողանա նշանակալի ճնշում գործադրել որոշում կայացնողների վրա:

Չնայած հետազոտողների շրջանում գոյություն ունի կարծիք, թե սոցիալական շարժումները հիմնականում օգտագործում են անօրինական մեթոդներ ցանկալի փոփոխության հասնելու համար, սակայն այդ մեթոդները կարող են ներառել հասարակական կարծիքի ձևավորումը և դրա միջոցով ճնշումների իրականացումը, ընտրողների մոբիլիզացիան՝ որպես օրակարգի փոփոխության հնար (Coglianese 2001, 85): Մինչդեռ այս շարժման դեպքում հնարավոր եղավ ականատես լինել և՛ օրինական, և՛ հակաօրինական մեթոդների կիրառմանը: Այսպես, քաղաքային շարժումները համասեռ չեն և ներառում են տարբեր տիպի սոցիալական գործողություններ (Hammel 2000, 158):

Շարժման կոնֆլիկտի առարկան, ըստ շարժման մասնակիցների, քաղաքապետարանի անօրինական որոշումն էր, համաձայն որի՝ Աֆրիկյանների ակումբի շենքը պետք է ապամոնտաժվեր և տեղափոխվեր այլ վայր: Շարժման մասնակիցները դեմ էին արտահայտվում հուշարձանի ապամոնտաժմանը, քանի որ դա կարող էր անշրջելի վնաս պատճառել հուշարձանին և խախտել այն բնական միջավայրը, որում շենքը կառուցված էր, և որը հնարավոր չէր լինի վերականգնել՝ մեկ այլ վայրում շենքը վերակառուցելով:

«Ես թերահավատ եմ, որ այն հնարավոր կլինի վերականգնել, քանի որ քարերի մեծ մասը անհայտ վայրում է, մի մասը վնասված է, իսկ ներսի պատշգամբն առհասարակ արդեն քանդվել է»:
Խորին հարցազրույց, ար., Երևան

2014 թվականի ապրիլի 2-ին տրվեց Աֆրիկյանների շենքի ապամոնտաժման թույլատվությունը՝ հաշվի չառնելով, որ Տերյան փողոցի լայնացումը, հուշ-

արձանի տեղափոխումը հակասում էին «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածին, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 264-րդ հոդվածը քրեական պատասխանատվություն է նախատեսում պատմամշակութային հուշարձանի քանդման համար՝ ընդհուպ 5 տարի ազատազրկմամբ:

Այս որոշման հրապարակումը ստիպում է շարժման ուժերը կենտրոնացնել հաղորդակցությունների դաշտում: Այդ ուղղությամբ տարված աշխատանքները դրական արդյունքներ են տալիս և հանգեցնում ապամոնտաժման աշխատանքների ժամանակավոր դադարեցմանը. շարժումը բացահայտում է, որ մշակույթի նախարարությունը թույլտվություն չէր տվել ապամոնտաժման աշխատանքների համար: Սակայն մի քանի օր հետո ապամոնտաժման աշխատանքները վերսկսվեցին, քանի որ պարզվեց՝ մշակույթի նախարարությունը իրավասու չէ փոփոխելու քաղաքաշինության նախարարության կայացրած որոշումները: Ստեղծված կոնֆլիկտային իրավիճակը հիշեցնում է Ֆրանկֆուրտի դպրոցի անվանի սոցիոլոգներից մեկի՝ Լյուս Մամֆորդի գաղափարները «մեգամեքենայի» մասին: Այս եզրույթով նա մատնանշում էր համակարգի այնպիսի վիճակը, որի մեծության պատճառով որոշում ընդունողները չեն կարող պահպանել վերահսկողությունը ամբողջ համակարգի հանդեպ: Հետևաբար, համակարգը որպես ամբողջ չի կարգավորվում, իսկ դրա տարբեր մասերը կարգավորվում են իրարից անկախ և հանգեցնում են կոնֆլիկտների: Այս երևույթն ակնառու երևում է Աֆրիկյանների շենքի պարագայում. պետության տարբեր նախարարություններ անկախ իրարից կատարում են իրենց գործառույթները, բայց գործողությունների ընդհանուր արդյունավետության առումով դրանք առաջացնում են բախում ոչ միայն հանրային ընկալման, այլ նաև օրենսդրական համապատասխանության տեսանկյունից: Հետևաբար, կարելի է հանգել այն եզրակացության, որ քաղաքային զարգացումը, որպես խնդիր, և դրանից բխող քաղաքային շարժումների առաջացումը մեծապես պայմանավորված են համակարգի ոչ լիարժեք կառավարմամբ: Ըստ այդմ, քաղաքային շարժումները կատարում են կոմպենսատոր գործառույթ՝ կարգավորելով պետության/համակարգի և հասարակության միջև ծագած կոնֆլիկտները: Այլ կերպ ասած՝ սոցիալական շարժումների, այդ թվում՝ քաղաքային շարժումների դեպքում «կոմպենսատոր գործառույթը» կարելի է մեկնաբանել որպես մի մեխանիզմ, որի միջոցով սոցիալական շարժումները փորձում են լրացնել կամ փոխարինել այն բացերը, որոնք առաջանում են պետական կառավարման, սոցիալական ծառայությունների կամ քաղաքական ներկայացվածության թերությունների հետևանքով: Այս տեսանկյունից կարևոր հարցադրում է ի հայտ գալիս՝ արդյոք քաղաքային շարժումը պետք է ձուլվի որևէ համակարգի հետ և ծավալի իր գործունեությունը որպես սոցիալ-քաղաքական համակարգ, թե պետք է զարգանա որպես գործող իշխանական կառույցներին հակակշիռ (Naerssen 2001, 678):

Շենքի խնդիրը հանրայնացնելու համար շարժումն օգտագործեց, իր բոլոր սոցիալական կապերը, որի շնորհիվ հնարավոր եղավ նկարել «Երևան» տեսա-

հոլովակը՝ օգտագործելով Աֆրիկյանների շենքի լուսանկարները, հանրությանը իրազեկել Աֆրիկյանների շենքի գոյության ու դրա ճակատագրի մասին: Կազմակերպվեցին անվանի դաշնակահար Տիգրան Համասյանի մասնակցությամբ համերգ հենց Աֆրիկյանների շենքում, լուսանկարչական ցուցահանդեսներ և մի շարք այլ միջոցառումներ, որոնց նպատակն էր ավելի շատ երիտասարդների հաղորդակից դարձնել հին Երևանի խնդիրներին և շենքի պաշտպանությանն ավելի շատ մարդ ներգրավել: Սիմվոլիկ նշանակություն ունեցավ նաև նկարիչ Կարեն Օհանյանի կազմակերպած պերֆորմանսը Աֆրիկյանների շենքում: Ըստ որոշ հետազոտողների, զանգվածային բողոքի ցույցերը, այդ թվում նաև սոցիալական շարժումներն ու հեղափոխություններն իրենց մեջ կրում են արխաիկ փառատոնի տարրեր (Abrahamian, Shagoyan 2013, 69): Այս միջոցառումները, դրանց բնույթը և անցկացման կառուցվածքը հաստատում են այդ միտքը:

Շարժումն իր ակտիվության գագաթնակետին է հասնում, երբ ապամոնտաժվում է շենքի ֆասադը. մասնակիցները որոշում են դիմել կտրուկ քայլերի և ներխուժում են շենք, գրավում այն: Այդ քայլը, հանդիպելով ոստիկանության հակազդմանը, ստանում է հանրային մեծ հնչեղություն, նույնիսկ հանրային նամակներ են ուղարկվում երկրի նախագահին: Սակայն անգամ այս պարագայում շարժումը չի կարողանում բավականաչափ ճնշում գործադրել որոշում կայացնողների վրա:

Անկում. Շարժման մասնակիցների պայքարը, որը ներառում էր բազմաթիվ ակցիաներ և ցույցեր, արդյունք չտևեց. 2014 թվականի հուլիսի 1-ին շենքը, այնուամենայնիվ, ապամոնտաժվեց: Այսպիսով, քաղաքային շարժումը տապալվեց, և վերջինիս դիսկուրսը մամուլում բավական արագ մարեց:

Չնայած այս հանգամանքին՝ շարժման անդամների մեծամասնությունը գտնում է, որ նույնիսկ այդ պարագայում շարժումը էական հաջողություններ գրանցեց. նախ բացահայտվեց, որ օրենսդրական դաշտում առկա են լուրջ հակասություններ, բացի այդ, բարձրացված աղմուկը խթանեց Երևանի հին շենքերի ճակատագրին հետամուտ լինելու գործընթացը տարբեր մակարդակներում: Այս առումով հնարավոր է առանձնացնել այս քաղաքային շարժման հետևյալ մի քանի կոմպենսատոր գործառույթ.

– *Տեղեկատվական-իրազեկում.* շարժումը հանդես է գալիս որպես հանրության իրազեկման հարթակ՝ տրամադրելով տեղեկատվություն կառուցապատման ծրագրերի, դրանց հնարավոր վնասների և օգուտների, օրինականության և հասարակական ազդեցության մասին: Այս կոմպենսատոր գործառույթի նպատակն է իրազեկել և ձևավորել հանրային կարծիք, ներգրավել նոր մասնակիցների:

– *Կոլեկտիվ հիշողության և ինքնության վերարտադրություն.* քաղաքային տարածքները հաճախ կրում են պատմամշակութային արժեք, և շարժումը հանդես է գալիս որպես այդ հիշողության և ինքնության պահպանման և փոխանցման գործիք: Այս գործառույթում կարելի է տեսնել քաղաքային շարժման

կոմպենսատորի դերը՝ որպես ազգային կամ տեղական ինքնության պաշտպանության գործողություն:

– *Քաղաքային մշակույթի պահպանություն.* շարժումը, պաշտպանելով պատմական շինությունը, պայքարում է քաղաքային միջավայրի մշակութային, յուրօրինակության և էսթետիկ արժեքների պահպանման համար: Շարժման կոմպենսատոր գործառույթը տեսանելի է նրանում, որ այն փորձում է պահպանել քաղաքի պատմական և մշակութային կերպարը՝ կանխելով անկառավարելի կառուցապատման և շինարարական շահի թելադրանքով իրականացվող միջամտությունները:

– *Մասնակցային գործընթացների ջատագովություն.* շարժումը պայքարում է քաղաքի մակարդակում հանուն ժողովրդավար կառավարման և նպաստում առհասարակ ժողովրդավար, բաց և թափանցիկ գործընթացների վարման մշակույթի ձևավորմանը:

– *Քաղաքացիների և պետական համակարգերի միջև առաջացած կոնֆլիկտի կարգավորում.* շարժումը գործում է որպես միջնորդ քաղաքացու և պետության միջև՝ ձևավորելով երկխոսություն, հանդես գալով օրինական բողոքներով, առաջարկներով և լուծումներով:

Հաշվի առնելով սոցիալական շարժման գործառույթները՝ կարելի է ասել, որ Աֆրիկյանների ակումբի պաշտպանությունը շարժման նպատակն էր միայն նեղ իմաստով: Յուրաքանչյուր շարժում ունի նաև քաղաքական նպատակ՝ կառավարել իշխանության վերաբաշխումը հասարակության մեջ՝ ազդելով քաղաքական օրակարգի ձևավորման վրա (Silva 2015, 29): Այս առումով շարժման հիմնական նպատակներն էին՝ բարձրաձայնել պատմամշակութային հուշարձանների խոցելիությունը իրավական տեսանկյունից և ձևավորել դրա պաշտպանության հանրային օրակարգ:

Հաշվի առնելով, որ այս քաղաքային շարժումը պարտության մատնվեց, կարևոր է նաև հասկանալ այն խոչընդոտները, որոնք նպաստեցին շարժման մարմանը: Շարժման ձախողման հիմնական խոչընդոտներն արտաքին բնույթի էին և բխում էին ժամանակակից հայ հասարակության սոցիալ-քաղաքական, մշակութային և տնտեսական համատեքստից: Դրանց թվում են՝

– *Հասարակական ապատիան.* ըստ խորին հարցազրույցների արդյունքների՝ հասարակության լայն շերտերը դեռ պատրաստ չէին մասնակից լինել երկրում տեղի ունեցող անգամ փոքր իրադարձությունների կառավարմանը: Հանրությունը բավականաչափ հետաքրքրություն չցուցաբերեց XIX դարի շենքի ճակատագրի հանդեպ և չմասնակցեց Աֆրիկյանների շենքի շուրջ տեղի ունեցող իրադարձություններին:

– *Վստահության պակասը.* շարժման անդամների տեսանկյունից վստահությունը լուրջ դեր խաղաց շարժման վաղաժամ անկման տեսանկյունից: Մի կողմից, ինստիտուցիոնալ մարմինների հանդեպ վստահության ցածր մակարդակը և սեփական ուժերի հանդեպ անվստահությունը անհնարին դարձրին այն հասարակական ընկալումները, որ քաղաքացիները կարող են իրենց քաղաքում որևէ

բան փոխել: Մյուս կողմից՝ շարժման անդամների հանդեպ նույնպես անվստահություն կար, որը խոչընդոտեց հասարակության լայն շերտերի համախմբումը շարժման շուրջ և պայքարը հանուն մշակութային արժեք ներկայացնող շենքի:

– *Թերություններն օրենսդրական կարգավորումներում.* ըստ շարժման անդամների մեծամասնության՝ շարժման ձախողման հիմնական պատճառը թերի օրենքներն էին: Օրենսդրական դաշտի հակասությունների հետևանքով հնարավորություն ստեղծվեց կիրառել այն ըստ հայեցողության:

– *Նախադեպի բացակայությունը.* նախկինում գոյություն ունեցող որևէ շարժում չի պսակվել իրական հաղթանակով, հաղթանակով, որը պայմանավորված կլիներ հանրային պահանջով: Այսինքն՝ որևէ մեխանիզմ, որը հետագայում կպաշտպաներ հանրային սեփականությունը մասնավոր կապիտալից, չստեղծվեց: Այս տեսանկյունից կարելի է ասել, որ Աֆրիկյանների ակումբի պաշտպանության համար որևէ հաջող նախադեպ չկար թե՛ հանրային ճնշման, թե՛ հանրային հաղթանակի տեսանկյունից:

Շարժման ձախողման պատճառներից կարելի է նշել նաև շարժման հետ անմիջական կապ ունեցող պատճառներ, որոնք պայմանավորված են շարժման առանձնահատկություններով: Դրանցից առավել կարևոր են՝

– *Շարժման փոքրաթվությունը.* մոբիլիզացիայի և նոր անդամների ներգրավման ոչ արդյունավետ ռազմավարության հետևանքով շարժումը փոքրաթիվ էր և չէր կարող իր ունեցած ռեսուրսներով նշանակալի ազդեցություն ունենալ որևէ քաղաքական գործընթացի վրա և հասնել իր նպատակին:

– *Շարժման ինքնությունը* առաջին հերթին վերաբերում է դժվարությունների համատեղ հաղթահարմանը, խմբային հերոսության դրսևորմանը, փոխադարձ աջակցությանը և պաշտպանությանը, հատկապես ճգնաժամային իրավիճակներում (Tadevosyan 2015, 106): Եթե շարժման ինքնությունն ընդունելի չէ անդամների մեծամասնության կողմից, ապա շարժումը չի կարող երկար գոյատևել:

– *Շարժման ռազմավարությունը,* որը չէր ներառում կոալիցիաներ և համագործակցություններ տարբեր քաղաքական կշիռ ունեցող կարծիքի առաջատարների, քաղաքական կուսակցությունների և այլ քաղաքական միավորների հետ, որոնք կարող էին աջակցել հավելյալ ռեսուրսներով և նպաստել ավելի լայն զանգվածների մոբիլիզացիային: Ինչպես նաև ուսումնասիրություններ կան, որոնք վկայում են, որ ժամանակակից իրականությունում ցանցային կառուցվածք ունեցող շարժումները ավելի մեծ հավանականությամբ են կարողանում հասնել հաջողության (Abrahamian, Shagoyan 2012, 524):

– *Սահմանափակ հանրային վստահությունը.* հաշվի առնելով, որ շարժման մեջ մեծապես ներգրավված էին տարբեր արվեստագետներ, երաժիշտներ, ճարտարապետներ՝ այն ընկալվում էր որպես «էլիտար» նախաձեռնություն: Լայն զանգվածները չընկալեցին Աֆրիկյանների շենքի պաշտպանությունը՝ իբրև ընդհանուր հանրային արժեքի պաշտպանություն, ինչը սահմանափակեց շարժման զանգվածայնությունը:

Եզրակացություններ

Ընդհանուր առմամբ, Երևանում քաղաքային շարժումները ձևավորվեցին իբրև հանրային տարածքների վերափոխումը կանխելու փորձ: «Պահպանե՛ք Աֆրիկյանների շենքը» շարժումը բացառություն չէր. երկարատև պայքարից հետո այն չկարողացավ հասնել իր նպատակին:

Աֆրիկյանների ակումբի պահպանման շարժման ձախողումը պայմանավորված էր միաժամանակ ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոններով, որոնք փոխազդեցության մեջ անհնարին դարձրին շարժման հաղթանակը: Ներքին խոչընդոտները՝ կազմակերպչական անկայունությունը, ռեսուրսների պակասը, հաղորդակցության և հանրային ներգրավվածության խնդիրները, թուլացրին շարժումը՝ սահմանափակելով դրա ձայնը տարածելու հնարավորությունները և խափանեցին լայն զանգվածների համար ընդունելի օրակարգի ձևավորումը: Մյուս կողմից, արտաքին ազդակներն առավել վճռորոշ էին. ներդրումային շահերի գերակայությունը, պետական կառույցների անտարբերությունն ու քաղաքական կամքի բացակայությունը, ինչպես նաև մշակութային ժառանգության ոչ բավարար իրավական պաշտպանությունը խորացրին շարժման անզորությունը: Ավելին, հասարակության լայն շերտերում առկա սոցիալական անտարբերությունն ու արժեհամակարգային բևեռացումը թույլ չտվեցին, որ խնդիրը վերածվի համազգային օրակարգի: Այս ամենը վկայում է, որ քաղաքային շարժումների հաջողությունը կախված է ոչ միայն արդար պահանջների առկայությունից, այլև կազմակերպման, հանրայնացման և ինստիտուցիոնալ միջավայրի համատեղ ուժից: Թերևս այն նախադեպ ստեղծեց քաղաքային խնդիրները բարձրաձայնելու և հասարակության կողմից փոփոխություն նախաձեռնելու հարցում: Այս առումով յուրաքանչյուր շարժում՝ հաջողության հասած թե տապալված, ձևավորում է հասարակական բողոքի մշակույթն արդի հայ հասարակությունում:

Շնորհակալական

Շնորհակալություն ենք հայտնում այն բոլոր հարցվողներին, որոնք արժևորեցին քաղաքային շարժումներն ուսումնասիրող այս հետազոտությունը և ներկայացրին իրենց կարծիքները, փորձը և գաղափարները:

Գրականություն/References/Литература

1. Իշխանյան Ա. 2018, Ինքնորոշվա՞ծ քաղաքացիներ. քաղաքացիական ակտիվիզմի նոր ալիքը Հայաստանում, Հայ սոցիոլոգիական մտքի անթոլոգիա, Երևան, ԵՊՀ հրատ., 488–490: Ishkhanyan A. 2018, Self-Determined Citizens? The New Wave of Civil Activism in Armenia, Anthology of Armenian Sociological Thought, Yerevan, YSU Press, 488–490 (in Armenian).
2. Իշխանյան Ա. 2015, Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը և բնապահպանական ակտիվիզմը Հայաստանում, Սոցիոսկոպ, 33–34:

Ishkhanyan A. 2015, Civil Society, Development, and environmental Activism in Armenia, Socioscope, 33–34 (in Armenian).

3. Հարությունյան Գ. 2021, Սոցիալական շարժումների սահմանման խնդրի շուրջ, Բանբեր Երևանի համալսարանի, Սոցիոլոգիա, N 2, 62–75:
Harutyunyan G. 2021, On the Problem of Defining Social Movements, Bulletin of Yerevan University, Sociology, N 2, 62–75 (in Armenian).
4. Погосян Г. 2017, Армянское общество. Тенденции и риски радикализации, Социологический альманах, N 9, 43–50.
Pogosyan G. 2017, Armenian Society: Trends and Risks of Radicalization, Sociological Almanac, N 9, 43–50 (in Russian).
5. Abrahamian L., Shagoyan G. 2012, From Carnival Civil Society toward a Real Civil Society: Democracy Trends in Post-Soviet Armenia, Anthropology & Archeology of Eurasia, 50/3, 11–50.
6. Abrahamian L., Shagoyan G. 2013, Rallies as Festival and Festival as a Model for Rallies: Armenia 1988 and 2008, Caucasus, Conflict, Culture: Anthropological Perspectives on Times of Crises /Stéphane Voell and Ketevan Khutsishvili (eds.) Marburg, Curupira, 65–90.
7. Azatyan O. 2022, On the Issues of social Movements in Armenia: Civic Influence or a Step Towards Democratization? Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 1/1, 107–118.
8. Coglianese C. 2001, Social Movements, Law, and Society: The Institutionalization of the environmental Movement/ Law Review, University of Pennsylvania, 85–118.
9. Domaradzka A. 2018, Urban social Movements and the Right to the City: An Introduction to the Special Issue on Urban Mobilization, International Journal of Voluntary and Nonprofit Organizations, vol. 29/4, 607–620.
10. Finquelievich S. 1981, Urban social Movements and the Production of Urban Space, Acta Sociologica, 24/4, 239–249.
11. Hammel P., Lustiger-Thaler H., Mayer M. 2005, Urban Movements in a Globalizing World, Taylor & Francis.
12. Karolak M. 2001, Social Media and Urban Social Movements: The Anatomy of Continued Protest in Authoritarian Contexts, Contemporary Arab Affairs 12, N 2, 25–52.
13. Mayer M., Boudreau J. 2012, Social Movements in Urban Politics: Trends in Research and Practice, The Oxford Handbook of Urban Politics, 273–292.
14. Naerssen T. 2001, Globalization and Urban Social Movements: The Case of Metro Manila, the Philippines, The Philippines Historical and Social Studies, N 157/3, 677–689.
15. Olcar C. 2023, Urban Movements and their Impact on Spatial Transformation, Leiden, Brill.
16. Pickvance C. 2003, From Urban Social Movements to Urban Movements: a Review and Introduction to a Symposium on Urban Movements, N 27/1, 102–109.
17. Silva G. 2015, Social Movements, Protest, and Policy, European Review of Latin American and Caribbean Studies, 27–39.
18. Tadevosyan A. 2015, Challenges of Transition in Post-Soviet Armenia: Protest Movements, Power, and Society, Regional Security Issues, 101–113.